Համափարփակ հաշվետվություն «Գործընկեր երկրների միջև բարձրագույն կրթության ոլորտի շարժունության ծրագիր» (KA107-2020) նախագծի իրականացման մասին

- Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան
- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
- Ֆլումինենսեի դաշնային համալսարան (Բրազիլիա)
- Սանտո Դոմինգոյի տեխնոլոգիական ինստիտուտ (Դոմինիկյան Հանրապետություն)
- Կովկաս համալսարան (Վրաստան)
- Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան (Կոսովո)
- Ազգային ավիացիոն համալսարան (Ուկրաինա)
- Ուկրաինայի բնապահպանության և կենսաբանական գիտությունների ազգային համալսարան
- Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան՝ «Իգոր Սիկորսկու Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ»
- Սումիի պետական համալսարան

Վարշավա 2023

Բովանդակություն

I. Նախագիծ ..... Error! Bookmark not defined.
1. Նախագծի նպատակները ..... **Error! Bookmark not defined.**
2. Մասնակից համալսարանները .....
3. Նախագծի տևողությունն ու ֆինանսավորումը .....
4. Իրականացված շարժունությունը .....
II. Մասնկիցներ .....
1. Գործընկեր համալսարաններում ուսանողների շարժունություն՝ որպես ուսումնական գործընթացի մի մաս ..... **Error! Bookmark not defined.**
2. Գործընկեր համալսարաններում Ակադեմիական անձնակազմի շարժունություն՝ ուսանողների համար դիդակտիկ դասընթացներ անցկացնելու նպատակով
3. Անձնակազմի շարժություն՝ վերապատրաստման նպատակով.....

I. ՆԱԽԱԳԻԾ

1. Նախագծի նպատակները

Նախագծի հիմնական նպատակն է՝ ուսանողների, գիտական և վարչական անձնակազմի ներկայացուցիչների շարժունության կազմակերպման միջոցով դրական փորձի փոխանակումը, բուհերի միջև ուսանողների միջազգային շարժունության խթանումը:

Ծրագրի շրջանակում համալսարանների միջև իրականացված համագործակցությունն ուղղված էր մասնակիցների գիտելիքների, հմտությունների զարգացմանն ու խորացմանը, մասնավորապես.

- մասնագիտական կարողությունների բարելավմանը,
- ինքնագնահատման բարձրացմանը,
- օտար լեզուների իմացության բարելավմանը,
- միջազգային հարթակում համագործակցության իրականացման միջոցով սոցիալական շփումների ընդլայնմանը,
- աշխատավայրում և աշխատաշուկայում գրավչության բարձրացմանը,
- ուսումնական հմտությունների կատարելագործմանը,
- ուսումնական նյութերի և ձեռնարկների արդիականացմանը:

Նախագծի շրջանակում իրականացվել են նաև.

- մասնակից համալսարանների միջազգային ռազմավարության մշակում,
- կրթական մակարդակի և որակի բարձրացում,
- կրթական ծրագրերի համեմատում և վերանայում, գործընկեր համալսարանների պարագայում՝ կրթական ծրագրերի եվրոպական չափանիշներին համապատասխանեցում,
- մագիստրոսական կրթական ծրագրերի համատեղ մշակում,
- գործընկեր համալսարանների հետ կրկնակի դիպլոմների ծրագրերի մշակում,
- հետազոտական ոլորտում համագործակցության նպատակով առաջարկների համատեղ մշակում, ներկայացում համատեղ հրատարակվող գիտական հրապարակումներում:

Փորձի փոխանակումը նպաստեց արտերկրում կրթություն ստանալու հայեցակարգերի մշակմանն ու տարածմանը, միջազգային ակադեմիական փոխանակման ֆինանսավորման նոր աղբյուրների ձևավորմանը, բուհերի դրական փորձի ներկայացմանը:

Քննարկվել են սոցիալական, իրավական, բնապահպանական խնդիրներ և դրանց լուծման ուղիները:

Բուհերի միջև ձևավորված համագործակցությունը նպաստեց դրանց հեղինակության բարձրացմանը՝ թե՛ տեղական և թե՛ տարածաշրջանային մակարդակներում:

Նախագծի շրջանակում առաջադրված բոլոր խնդիրները հաջողությամբ իրականացվեցին:

Մասնակից համալսարաններ

ա/. Լեհաստան

- **ՎԱՐՇԱՎԱՅԻ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
  Wyższa Szkoła Ekologii i Zarządzania w Warszawie
  (University of Ecology and Management in Warsaw)

Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանը՝ Լեհաստանի լավագույն մասնավոր տեխնիկական համալսարաններից է, որը հիմնադրվել է 1995 թվականի հուլիսի 18-ին՝ Կրթության ազգային նախարարության N 62 Որոշմամբ:

Համալսարանն ավելի քան 28 տարի իրականացնում է բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով ուսումնառություն առկա և հեռակա եղանակով:

Համալսարանում գործում է երկու ֆակուլտետ՝ ճարտարապետության ֆակուլտետ, ճարտարագիտության և կառավարման ֆակուլտետ, որտեղ ուսումնառությունը կազմակերպվում է ավելի քան 11 ուղղություններով:

Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանն ապահովում է բարձրակարգ արդիական ուսուցման համակարգ, այդ թվում՝

- գիտելիքի վրա հիմնված տեղեկատվական հասարակության ձևավորում, տնտեսության զարգացմանն ուղղված կարիքների բավարարում,
- Լեհաստանի և ԵՄ-ի ազգաբնակչության մասնագիտական հմտությունների և կրթական շեմի բարձրացում,
- կայուն զարգացման հայեցակարգի համատեքստում նոր տնտեսական, սոցիալական և մշակութային արժեքների ձևավորում՝ ներկա և ապագա աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Համալսարանի ղեկավարության ուշադրության կենտրոնում է՝ կրթական բարձր մակարդակի ապահովումը ոլորտային ավելի քան 300 առաջատար մասնագետների ներգրավմամբ:

Բուհի դասախոսական անձնակազմում ներգրավված են Վարշավայի տարբեր համալսարանների գիտ.աշխատողներ, գործարարներ:

Պրոֆեսորադասախոսական կազմի և ֆակուլտետների խորհուրդների ներկայացուցիչների կողմից հնչեցրած առաջարկների հիման վրա (քննարկվել են կրթական ծրագրերի եվրոպական չափանիշներին համապատասխանելիության խնդիրները), բուհում ներդրվել են տեսական, գործնական դասընթացներ: Այս մոտեցումը ուսանողներին հնարավորություն է ընձեռում ինքնուրույն ընդունել կշռադատված որոշումներ:

ՎԱՐՇԱՑԱՅԻ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Olszewska 12 str., 00-792 Warsaw, Poland
Tel: +48 22 825 80 32/33
E-mail: erasmus@wseiz.pl
www.wseiz.pl

բ/. Հայաստան

- **ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
  (National University of Architecture and Construction of Armenia)

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՇՀԱՀ) հիմնադրվել է 1921 թվականին:

Համալսարանի առաքելությունն է՝ համապատասխան մասնագետների պատրաստում, գիտահետազոտական գործունեության իրականացում, ճարտարապետության, շինարարության, դիզայն, քաղաքային տնտեսություն, էկոլոգիա, կառավարում և տեխնոլոգիա ոլորտներում ծառայությունների մատուցում՝ միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Համալսարանում ներդրվել է ճկուն կրթական և հետազոտական համակարգ, պատրաստվում են բարձր որակավորում ունեցող, սոցիալական պատասխանատվությամբ մասնագետներ:

Համալսարանում գործում է հինգ ֆակուլտետ՝ Ճարտարապետության, Դիզայնի, Շինարարության, Քաղաքային տնտեսություն և էկոլոգիայի, Կառավարման և տեխնոլոգիայի: ՃՇՀԱՀ միակ մասնագիտացված բուհն է Հայաստանում, որը պատրաստում է ճարտարապետների, շինարարների:

ՃՇՀԱՀ-ի միջազգայնացման ռազմավարությունն ուղղված է կրթության, գիտության ոլորտներում միջազգային համագործակցության կայուն զարգացմանը: Ռազմավարության կարևոր ուղղություններից է՝ խթանել արտերկրի ճարտարապետաշինարարական համալսարանների հետ համագործակցությունը, կազմակերպել համատեղ գիտաժողովներ, ուսանողական նախագծային շաբաթներ, մրցույթներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության շարժունության ծրագրեր:

ՃՇՀԱՀ միջազգային հեղինակավոր համալսարանական կոնսորցիումների անդամ է: Համալսարանը մշտապես մասնակցել է եվրոպական տարածաշրջանային և միջազգային ծրագրերին, բուհը սկսած 1996 թ. ներգրավված էր TEMPUS, Erasmus Mundus, Erasmus + InnoCENS ծրագրերում, ներկայումս ակտիվ համագործակցում է Erasmus +, Iacobus +

ծրագրերի ձևաչափով: ՃՇՀԱՀ-ում մշտապես արդիականացվում են կրթական ծրագրերը, համալսարանի նյութատեխնիկական բազան: ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվում են շարժունության ծրագրեր Միլանի Պոլիտեխնիկական համալսարանի, Պեսկարայի համալսարանի, Լեհաստանի Կրակովի և Նիսի համալսարանների, Իսպանիայի Կաստելլո համալսարանի և Դիզայնի բարձրագույն դպրոցի հետ, և մի շարք այլ համալսարանների հետ:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Address: 105 Teryan Street, Yerevan 0009, Republic of Armenia

+374 10 58-72-84

+374 10 54-74-25

E-mail: info@nuaca.am

www.nuaca.am

գ/. Բրազիլիա

- **ՖԼՈՒՄԻՆԵՆՍԵԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

  (Universidade Federal Fluminense)

Բրազիլիայի դաշնային բարձրագույն կրթական համակարգում գործող Ֆլումինենսեի դաշնային համալսարանը հիմնադրվել է 1960 թվականին: Բուհի գլխամասը գտնվում է Նիտերոյ քաղաքում, իսկ կամպուսները՝ Ռիո դե Ժանեյրո նահանգի տարբեր հատվածներում, նաև Օրիքսիմինայում:

Ուսանողների ընդհանուր թվով Ֆլումինենսեի դաշնային համալսարանը հանդիսանում է Բրազիլիայի դաշնային խոշորագույն բուհերից մեկը, իսկ ազգային և միջազգային մակարդակներում՝ ընդգրկված է լավագույն բրազիլիական բուհերի ցանկում:

Բուհը ղեկավարվում է հետևյալ դրույթներով՝ ակադեմիական գերազանցություն, սոցիալական ազդեցություն, նորարարություն և հասարակությանը գիտելիքների փոխանցում:

Ֆլումինենսեի դաշնային համալսարանն իրականացնում է 134 բակալավրի և 350 մագիստրոսական կրթական ծրագրեր կիրառական գիտությունների, ճարտարագիտության, առողջապահության, հումանիտար, լեզվաբանության և արվեստի, կենսաբանության և այլ ոլորտներում: Ուսուցումը կազմակերպում է առկա և հեռավար ձևաչափով: Բուհը համագործակցում է 49 երկրների ավելի քան 280 համալսարանների և ինստիտուտների հետ, յուրաքանչյուր տարի համալսարան է այցելում շուրջ 100 օտարերկրյա ուսանող և ավելի քան 300 ուսանող մեկնում է սովորելու գործընկեր հաստատություններ: Համալսարանը Էրազմուս+ շարժունության ծրագրով համագործակցում է Ավստրիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Հունգարիայի, Կիպրոսի, Իռլանդիայի, Լեհաստանի, Էստոնիայի, Ռումինիայի, Խորվաթիայի և Բելգիայի համալսարանների հետ:

ՖԼՈՒՄԻՆԵՆՍԵԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Rua Miguel de Frias, 9 Icaraí

Niterói – RJ 24220-90

Փոստ՝ sri@id.uff.br

www.uff.br

դ/. Դոմինիկյան Հանրապետություն

- **ՍԱՆՏՈ ԴՈՄԻՆԳՈՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**
  Instituto Tecnológico de Santo Domingo
  (Santo Domingo Institute of Technology)

Սանտո Դոմինգոյի տեխնոլոգիական ինստիտուտը (INTEC)՝ Դոմինիկյան Հանրապետության բարձրագույն կրթական համակարգի մասնավոր, ոչ առևտրային հաստատություններից է, որը հիմնադրվել է 1972 թ. մի խումբ գիտնականների կողմից, որոնց նպատակն էր՝ երկրում սոցիալական վիճակի բարելավումը: Բուհի առանձնահատկություններն են՝ նորարար մոտեցում ճարտարագիտության, բիզնեսի, առողջապահական գիտությունների, բնապահպանական գիտությունների, սոցիալական և հումանիտար գիտությունների ոլորտներում:

Բուհում ներդրված են 38 բակալավրիատի, 74 ասպիրանտական կրթական ծրագրեր, ինչպես նաև ԱՄՆ-ի համալսարանների հետ համատեղ իրականացվում են և 9 միջազգային ասպիրանտական ծրագիր: Համալսարանում ունի ավելի քան 5000 ուսանող, ակադեմիական անձնակազմ՝ 1000, շրջանավարտ՝ 36000: Համալսարանը, իրականացնելով բարձր մակարդակի կրթական ծրագրեր, իր կայուն տեղն է զբաղեցրել Դոմինիկյան Հանրապետությունում: Բուհում տասնամյակներ շարունակ իրականացվել են ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ակտիվորեն զարգացել է միջազգային համագործակցությունն արտերկրի բազմաթիվ հաստատությունների հետ, ստորագրվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության պայմանագրեր: Էրազմուս+ ծրագրով իրականացվել են ակադեմիական շարժունության ծրագրեր Չեխիայի, Հունգարիայի, Հունաստանը, Ռումինիայի, Իսպանիային, Թուրքիային, Գերմանիայի և Լեհաստանի բուհերի հետ: Իրականացվել են նաև կարողությունների զարգացման խոշոր ծրագրեր.

- IPICA - Կարիբյան ավազանում գիտելիքների փոխանցման ծրագիրը իրականացվել է Իսպանիայի, Ավստրիայի, Ջամայկայի, Տրինիդադ և Տոբագոյում, Շվեյցարիայի և Գայանայի համալսարանների հետ:
- CAP4INNO- Կարիբյան ավազանում գիտելիքի և կարողությունների զարգացման, էներգիայի հասանելիության և արդյունավետության բարձրացման ծրագիրը իրականացվել է Իսպանիայի, Շվեդիայի, Ջամայկայի համալսարանների հետ:

- CARPIMS- Կարիբյան-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում շարժունության ծրագիր:
- ACCESS նախագիծ:

Ներկայումս համալսարանը մասնակցում է ELA4Attract - Empower LA HE for Inclusion and STEAM Attraction ծրագրերին:

Բացի այդ, բուհը Դոմինիկյան Հանրապետությունում ներդրված MOVENI շարժունության ծրագրի շրջանակում համագործակցում է 4 ազգային խոշոր համալսարանների հետ՝ PUCCM-ի UNAPEC-ի, UNIBE-ի և UNPHU-ի:

ՍԱՆՏՈ ԴՈՄԻՆԳՈՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Avenida de Los Próceres #49, Los Jardines del Norte 10602,

Santo Domingo, Dominican Republic

Tel: +1 809 567 9271

Email: movilidad@intec.edu.do

www.intec.edu.do

ե/. Վրաստան

- **ԿՈՎԿԱՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
  (Caucasus University)

Կովկաս համալսարանը հիմնադրվել է 1998 թվականին՝ Կովկասի բիզնես դպրոցի (CSB), ԱՄՆ Պետդեպարտամենտի միջոցներով, Ջորջիայի պետական համալսարանի հետ համագործակցությամբ (Ատլանտա, Ջորջիա, ԱՄՆ): Սկզբից գործում էր միայն մեկ ֆակուլտետ (դպրոց), ավելի ուշ՝ 2004 թ. հիմնադրվեց Կովկաս համալսարանը: Կովկաս համալսարանը 100% մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություն է: Այդ շրջանում հիմնադրվեցին նաև Կովկաս համալսարանի Բիզնեսի դպրոցը, Իրավագիտության դպրոցը, Մեդիա դպրոցը, Տեխնոլոգիական դպրոցը, Ճարտարապետության և դիզայնի դպրոցը, Կառավարման դպրոցը, Հումանիտար և հասարակական գիտությունների դպրոցը, Զբոսաշրջության դպրոցը, Բժշկական և առողջապահական կառավարման դպրոցը, Տնտեսագիտական դպրոցը: Նշված ֆակուլտետներում/դպրոցներում վրացերենով և անգլերենով իրականացվում են բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի 55 կրթական ծրագրեր: Համալսարանում ուսումնառում է շուրջ 10,000 ուսանող, որոնցից 25%-ը 40 տարբեր ազգությունների արտասահմանցի ուսանողներ են: Բուհը տեղակայված է Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի պատմական շենքերից մեկում:

Համալսարանի կարևորագույն նվաճումներից է՝ միջազգային հավատարմագրումը: Կովկասի համալսարանը և Բիզնեսի դպրոցը հաջողությամբ անցել են AASCB հավատարմագրման առաջին երեք փուլերը, ինչի վերաբերյալ նախնական ինքնագնահատման զեկույցը անվերապահորեն ընդունվել և դրական է գնահատվել AASCB խորհրդի կողմից:

Կովկաս համալսարանը տարածաշրջանում առաջին ուսումնական հաստատությունն է, որը գտնվում է AACSB-ի հավատարմագրման այս փուլում, ինչը վկայում է կրթական որակի մասին: Որակավորման այս փուլը անցել են աշխարհի լավագույն բիզնես դպրոցներից միայն 5%-ը:

Կովկաս համալսարանը և Զբոսաշրջության դպրոցը տարածաշրջանում առաջին հաստատություններն են, որոնց հաջողվել է ստանալ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության TedQual վկայականը:

Համալսարանի Ճարտարապետության դպրոցը ստացել է Բրիտանական ճարտարապետների թագավորական ինստիտուտի (RIBA) հավատարմագրումը:

Բուհը մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններից է, որն իրականացնում է 10 համատեղ և կրկնակի դիպլոմների շնորհմամբ ծրագրեր ԱՄՆ և եվրոպական գործընկերների հետ՝ տեղացի և ուսանողների համար:

Համալսարանն անդամակցում է մի շարք հեղինակավոր կազմակերպություններին՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի զարգացման Ասոցիացիային (CEEMAN), Բիզնեսի Դպրոցների զարգացման ասոցիացիային (AACSB), համալսարանների նախագահների միջազգային ասոցիացիային (IAUP), համալսարանների միջազգային ասոցիացիայի (IAU), բիզնեսի և տնտեսագիտության միջազգային ցանցին,
Եվրոպական իրավաբանական ֆակուլտետների ասոցիացիային (ELFA), Սևծովյան համալսարանների ցանցին (BSUM), Արվեստի և գիտության համաշխարհային ակադեմիային (WAAS), ՄԱԿ-ի ազդեցության ակադեմիային (UNAI), Վրաստանում ամերիկյան առևտրի պալատին (Amcham), այլ 65 երկրների 254 գործընկերներ միջազգային և տեղական կառույցներին:

Համալսարանն իրականացնում է Erasmus+ KA 171 ծրագիր եվրոպական գործընկերների բուհերի հետ: Ըստ Էրազմուս+ Ազգային գրասենյակի 2015 թվականի պաշտոնական զեկույցի՝ Կովկաս համալսարանը առաջատար մասնավոր հաստատություններից է ուսանողների և ակադեմիական անձնակազմի շարժունության, կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման ծավալի տեսանկյունից:

ԿՈՎԿԱՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Paata Saakadze street 1 Tbilisi, 0102, Georgia

Tel: (+995 32) 2 37 77 77

Email: info@cu.edu.ge , https://www.cu.edu.ge/en

զ/.Կոսովո

- ՖԵՐԻԶԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
- Universiteti i Shkencavete Aplikuara ne Ferizaj
  (University of Applied Sciences in Ferizaj)

UNIVERSITETI
I SHKENCAVE TË APLIKUARA NË FERIZAJ

Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարանը (UASF) հիմնադրվել է 2015 թվականի հուլիսի 6-ին՝ Կոսովոյի Հանրապետության խորհրդարանի որոշմամբ, և հանդիսանում է Պրիշտինայի համալսարանի կիրառական գիտությունների ֆակուլտետի իրավահաջորդը: 1976 թ. հիմնադրվեց Բարձրագույն կրթության կենտրոն, որը ուներ մեքենաշինական և փայտամշակման բաժիններ:

1988 թ. Բարձրագույն կրթության կենտրոնը լուծարվեց և ստեղծվեց Բարձրագույն տեխնիկական դպրոցը՝ մեքենաշինական և փայտամշակման ամբիոններով:

2002-2003 ուստարում ներդրվեցին բակալավրիատի կրթական նոր ծրագրեր Մեքենաշինության ամբիոնում՝ «Արհեստական նյութերի մշակման տեխնոլոգիա», Փայտաարդյունաբերության ամբիոնում՝ «Փայտամշակում» մասնագիտություններով:

Պրիշտինայի համալսարանի ղեկավար կազմի 05.09.2005 թ. որոշմամբ Բարձրագույն տեխնիկական դպրոցը վերակազմավորվեց Տեխնիկական կիրառական գիտությունների ֆակուլտետի, այնուհետև՝ Կիրառական գիտությունների ֆակուլտետի:

Համալսարանում գործում է 5 ֆակուլտետ:

- <u>Ճարտարապետության, դիզայնի և փայտամշակման տեխնոլոգիաների ֆակուլտետ.</u>

- Ճարտարագիտություն և կահույքագործություն,
- Փայտարտադրություն և դիզայն,
- Կանաչ ճարտարապետություն և ինտերիերի դիզայն (մագիստրոսական ծրագիր):

Նշված ծրագրերը ներառում են Ճարտարապետություն, Ինտերիերի դիզայն և փայտամշակում մասնագիտությունները:

- <u>Զբոսաշրջության և շրջակա միջավայրի ֆակուլտետ.</u>

- Զբոսաշրջություն և հյուրանոցի կառավարում,
- Զբոսաշրջություն և նորարարություն (մագիստրոսական ծրագիր):

Ուսանողներին ներկայացվում են միջազգային չափանիշներին համապատասխանող ծրագրեր զբոսաշրջության, կառավարման և հյուրանոցային գործի ոլորտներում:

- <u>Արդյունաբերական ճարտարագիտության և ինֆորմատիկայի ֆակուլտետ.</u>

- Արդյունաբերական ճարտարագիտություն, ինֆորմատիկա,

- Կիրառական ինֆորմատիկա (բակալավրիատ),

- Ճարտարագիտություն և ինֆորմատիկա (մագիստրատուրա):

Այս ծրագրերով իրականացվում է ճարտարագիտություն, Ինֆորմատիկա, Արդյունաբերական ճարտարագիտություն մասնագիտություններով խորը ուսուցում:

- Կառավարման ֆակուլտետ.

- Կառավարում և արդյունաբերություն:

Նշյալ կրթական ծրագրերով ուսումնառությունը կազմակերպվում է գիտական և տեխնոլոգիական նորարար մոտեցումներով:

- Կիրառական արվեստի ֆակուլտետ.

- Գրաֆիկական դիզայն և մուլտիմեդիա:

Կրթական ծրագիրը մշակվել է հաշվի առնելով աշխատաշուկային և համալսարանում գործող Արտադրողների խորհրդի պահանջները:

ՖԵՐԻԶԱՅԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

University of Applied Sciences in Ferizaj

Rr. RexhepBislimi, 70000 Ferizaj, Kosovo

Tel: +381(0) 290 310 010; +381(0) 290 310 013

E-mail: info@ushaf.net, www.ushaf.net

է/. Ուկրաինա

- **ՍՈՒՄԻԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
  (Sumy State University)

Սումիի պետական համալսարանը (SumDU)՝ Ուկրաինայի Սումի քաղաքում գտնվող բարձրագույն ուսումնական հաստատություն է: Համալսարանն իրականացնում է գիտահետազոտական, կրթական և սոցիալական ուղղվածության ծրագրեր՝ նախապատվություն տալով միջազգային համագործակցության խթանմանը, նորարարական տեխնոլոգիաների կիրառմանը, մասնավորապես՝ ՏՏ-ի ոլորտում: Բուհի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսումնառում են 12 000 ուսանող 57 մասնագիտություններով, 500 օտարերկրացի ավելի քան 30 երկրից: Ներդրվել է 20 կրթական ծրագիր անգլերենով:

Սումիի պետական համալսարանը համարվում է ազգային առաջատար բուհերից մեկը (3%), ընդգրկված է բուհերի միջազգային վարկանիշավորման հեղինակավոր ցանկերում՝ QS World University Rankings THE World University Rankings or Times Higher Education: Համալսարանը անդամակցում է Եվրոպական համալսարանական, Համալսարանական միջազգային ասոցիացիաներին:

Բուհը համագործակցում է 300 գործընկեր կազմակերպությունների հետ 60 երկրից:

Տարեկան բուհում իրականացվում է 300 դրամաշնորհային ծրագիր:

Վերջին 5 տարվա ընթացքում դրամաշնորհային ծրագրերի շրջանակում իրականացված հետազոտական աշխատանքների ծավալն ավելացել է 20-ով:

ՍՈՒՄԻԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2, Rymskogo-Korsakovast., 40007 Sumy, Ukraine
Tel/fax: +38 (0542) 33-10-81
E-mail: info@dir.sumdu.edu.ua
www.sumdu.edu.ua

- **ԱԶԳԱՅԻՆ ԱՎԻԱՑԻՈՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
- **НАЦІОНАЛЬНИЙ АВІАЦІЙНИЙ УНІВЕРСИТЕТ**
  (National Aviation University)

Ազգային ավիացիոն համալսարանը՝ ավիացիոն ոլորտի բարձրագույն ուսումնական առաջատար հաստատություններից է, որտեղ ուսումնառում են շուրջ 25,000 ուսանող, այդ թվում՝ 1,500 օտարերկրացի 55 երկրից: Համալսարանի ռեկտորն է՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Լուցկինն է:

XIX-րդ դարի վերջին Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտում ներդրվեցին ավիացիոն դասընթացներ: Կիևի ավիացիոն ինստիտուտը հիմնադրվել է Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտի ավիացիոն ֆակուլտետի բազայի վրա: Հետագայում բուհի անվանումը բազմիցս փոփոխվել է՝ Կիևի քաղաքացիական ավիացիայի ինստիտուտ (1947 թ.), Կիևի քաղաքացիական ավիացիայի ինստիտուտ (1965թ.), Կիևի քաղաքացիական ավիացիայի միջազգային համալսարան (1994 թ.), Ազգային ավիացիոն համալսարան (2000 թ.):

Բուհը իր 85-ամյա պատմության ընթացքում պատրաստել է ավելի քան 200,000 բարձր որակավորում ունեցող մասնագետների, որոնց թվում են հայտնի գիտնականներ, ավիացիոն ընկերությունների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և հաստատությունների ղեկավարներ, մասնագետներ, ովքեր կազմակերպում են ինքնաթիռների թռիչքները, սպասարկումն ու վերանորոգումը, ուղևորների և բեռնա-փոխադրումներ: Համալսարանում գործում են գիտական դպրոցներ կառավարման, մեխանիկայի, էլեկտրոնիկայի, էլեկտրատեխնիկայի, նյութագիտության և համակարգչային տեխնիկայի ոլորտներում: Դրանց հիմնադիրներն էին պրոֆեսոր Տ.Բաշտան, ակադեմիկոսներ Օ.Կուխտենկոն և Գ.Պուխովը, թղթակից անդամներ Օ.Պենկովը, Բ.Մալինովսկին, պրոֆեսորներ Ա.Գրոխոլսկին, Լ.Իլնիցկին և այլոք: Ազգային բարձրագույն կրթության և գիտության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի, ազգային և միջազգային մեծ ճանաչում ունենալու համար, Ուկրաինայի Նախագահ Լեոնիդ Կուչմայի հրամանագրով 2000 թ. սեպտեմբերին համալսարանին շնորհվեց ազգային բուհի կարգավիճակ:

Համալսարանի առավելությունը ներքին և արտաքին կրթական շուկայում ավիացիոն բաղադրիչն է: Համալսարանը պատրաստում է օդաչուներ, անօդաչու թռչող սարքերի օպերատորներ, ավիացիոն սարքավորումների և օդանավերի շարժիչների վերգետնյա սպասարկող մասնագետներ, օդային երթևեկության կարգավորող մասնագետներ, ինժեներներ, ինքնաթիռի սարքավորումների և ավիոնիկայի մասնագետներ, ռադիոէլեկտրոնիկայի փորձագետներ, ժամանակակից օդանավակայանների, նախագծողներ, ավիացիայի և լոգիստիկայի փորձագետներ, կիբերանվտանգության մասնագետներ, բնապահպաններ, տնտեսագետներ, իրավաբաններ, հոգեբաններ, բժիշկներ և այլն:

Աշխարհի առաջատար համալսարանների հետ ունեցած միջազգային համագործակցության շնորհիվ մեր ուսանողները կարող են մասնակցել պրակտիկաների և ստանալ կրկնակի դիպլոմներ:

Համալսարանի կազմում գործում են հինգ ինստիտուտ, տասը ֆակուլտետ, ռազմական բաժին, վեց քոլեջ, երկու լիցեյ և Թռիչքների ակադեմիա Կրոպիվնիցկիում: Բուհն ունի Եվրոպայի ամենամեծ ավիացիոն ուսումնական անգարներ, ուսումնական օդանավակայան և ավիացիոն ցամաքային դաշտ, ուսումնական համալիրներ, գիտակրթական աերոդինամիկ համալիր: Համալսարանում գործում է 11 հանրակացարան, ճաշարան 1000 հոգում համար, ինտերնետ սրճարան, ուսանողական բիստրո, ժամանակակից ախտորոշիչ և բժշկական հագեցած սարքավորումներով առողջապահական կենտրոն, հիվանդությունների կանխարգելման բաժանմունք, 1500 նստատեղով մշակույթի-արվեստի կենտրոն, սպորտային կենտրոն: Գիտատեխնիկական գրադարանի հոնդը կազմում է 2,6 միլիոն գիրք: Բուհի գործընկերների թվում են՝ Ուկրաինայի առաջատար ավիացիոն ձեռնարկությունները, այդ թվում՝ Պետական ավիացիոն ծառայությունը, Պետական տիեզերական գործակալությունը, «Անտոնով» պետական կոնցեռնը, ՈւկրՕբորոնՊրոմը, Բորիսպիլի միջազգային օդանավակայանը, Կիևի միջազգային օդանավակայանը, Օդեսայի միջազգային օդանավակայանը, Քաղաքացիական ավիացիայի գործակալությունը:Ազգային ավիացիոն համալսարանի դիպլոմը ճանաչված է մրցունակ շատ երկրներում: Ազգային ավիացիոն համալսարանի կարգախոսն է՝ VIVERE! VINCERE! CREARE!

ԱԶԳԱՅԻՆ ԱՎԻԱՑԻՈՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1, Liubomyra Huzara ave.
03058 Kyiv, Ukraine
Tel: +380 44 406 7901E-mail: post@nau.edu.ua www.nau.edu.ua

- **ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**
  (National University of Life and Environmental Sciences of Ukraine)

Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարանը՝ ոլորտի առաջատար հաստատություններից է: Ունի 26 000 ուսանող և 600 շրջանավարտ, որոնք ուսումնառել և ուսումնառում են Կիևի բազային 3 ինստիտուտների 13 ամբիոններում, և Ուկրաինայում գործող հավատարմագրված 10 առանձնացված ստորաբաժանումներում:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմում ընդգրկված են 2600 դասախոս, այդ թվում՝ մոտ 300 պրոֆեսոր և դոկտոր, ավելի քան 1000 ասիստենտ:

Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարանը տարեցտարի ամրապնդում է իր առաջատար դիրքերը միջազգային ասպարեզում՝ ակտիվորեն մասնակցելով միջազգային կրթական ծրագրերին, վերապատրաստելով գյուղատնտեսության ոլորտի օտարերկրյա մասնագետների:

Համալսարանում կրթական գործընթացը կանոնակարգվում է միջազգային պայմանագրերով, ազգային ծրագրերով, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կնքված պայմանագրերով: Ներկայումս համալսարանում ուսումնառում են Լեհաստանի, Չինաստանի, Սլովակիայի, ԱՄՆ-ի, Վրաստանի, Կիպրոսի, Լիբանանի, Մարոկկոյի, Պաղեստինի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Չեխիայի քաղաքացիներ:

Բուհի սերտ համագործակցությունը այլ առաջատար համալսարանների հետ նպաստեց կրթական համակարգի բարեփոխմանը և արդիականացմանը՝ միջազգայնորեն ընդունված պահանջներին համապատասխան:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Tel: +38 044 531-36-52
E-mail: rectorat@nubip.edu.ua
www.nubip.edu.ua

- **Киевский политехническийинститут имени Игоря Сикорского**
- **ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ «ԻԳՈՐ ՍԻԿՈՐՍԿՈՒ ԱՆՎԱՆ ԿԻԵՎԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»**
  (National Technical University of Ukraine "Igor Sikorsky Kyiv Polytechnic Institute")

Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանը (2016 թ.՝ Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ») հիմնադրվել է 1898 թվականին և հանդիսանում է Եվրոպայի խոշոր տեխնիկական համալսարաններից մեկը: Բուհում գործում է 14 ֆակուլտետ, 10 գիտակրթական կենտրոն, մի շարք գիտահետազոտական ինստիտուտներ: Բուհում ուսումնառում է 22 000 ուսանող, պրոֆեսորադասախոսական կամզը՝ 3 235: Բուհը համագործակցում է մի շարք խոշոր տեխնիկական համալսարանների և հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հետ՝ UNESCO, UNIDO, WIPO, NATO, EDNES, ICSU, CODATA, այդ թվում նաև միջազգային կորպորացիաների հետ՝ SIEMENS, FESTO, SAMSUNG, INTEL:

Համալսարանի գիտական և տեխնիկական նորարարություններն արժանանում են Ուկրաինայի տարբեր պետական և միջազգային մրցանակների:

2021 թվականի սեպտեմբերի վերջին միջազգային բարձրագույն կրթության վերլուծական գործակալությունը QS Quacquarelli Symonds-ը հրապարակել է Graduate Employability Rankings 2022-ը հաշվետվությունը, համաձայն որի Իգոր Սիկորսկու Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտը զբաղեցրել է 301+ տեղը՝ «Գործատուի հեղինակություն» անվանակարգում: Շրջանավարտների մասնագիտական զբաղվածության արդյունքներով՝ 301+ տեղը, «Գործատու – Ուսանող»՝ 201+ տեղը, գործատուների հետ համագործակցության անվանակարգում՝ 201+ տեղը, շրջանավարտների զբաղվածության մակարդակի՝ 201+ տեղը: Նշյալ փաստերը վկայում են Ուկրաինայում տեխնիկական համալսարանների շարքում առաջատար դիրք ունենալու մասին:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ «ԻԳՈՐ ՍԻԿՈՐՍԿՈՒ ԱՆՎԱՆ ԿԻԵՎԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
37 Prosp. Peremohy, Kyiv, Ukraine, 03056
Tel.: +380 44 236 7989
E-mail: mail@kpi.ua
www.kpi.ua

Նախագծի տևողությունը, բյուջեն

Նախագծի տևողությունը	**01.08.2022 – 31.07.2024**
Ամիս	**24**
Ընդհանուր բյուջեն	**80 855 եվրո**

Ծրագրի բյուջեն բաշխվել է գործընկեր համալսարանների միջև՝ համաձայն ծրագրի ֆինանսական հատվածի:

Համալսարան	Երկիր	Քաղաք	Նախատեսված բյուջեն (€)	Փաստացի ծախսերը (€)
Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան	Լեհաստան	Վարշավա	13 450	13 450
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	Հայաստան	Երևան	6 950	5 700
			6 950	6 950
Ֆլումինենսեի դաշնային համալսարան	Բրազիլիա	Նիտեյրոյ	2 480	2 480
Սանտո Դոմինգոյի տեխնիկական ինստիտուտ	Դոմինիկյան Հանրապետություն	Սանտո Դոմինգո	4 960	4 960
Կովկաս համալսարան	Վրաստան	Թբիլիսի	6 950	5 700
Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան	Կոսովո	Ֆերիզա	13 565	11 060,40
Ազգային ավիացիոն համալսարան	Ուկրաինա	Կիև	4 320	4 320
Սումիի պետական համալսարան	Ուկրաինա	Սումի	1 580	1 580
Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարան	Ուկրաինա	Կիև	1 580	1 580
Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ»	Ուկրաինա	Կիև	5 570	5 570
			68 335	63 350,40

	Կազմակերպական գործընթացների ծախսերը		12 500	12 500
	Ընդհանուրը՝		**80 855**	**75 850,40**

Շարժունության ձև	Էրազմուս+ ծրագրի ազգային գործակալության կողմից տրամադրված բյուջեն	Փաստացի իրականացված բյուջեն
SMS – ուսանողների շարժունություն ուսումնառության նպատակով	36 520	31 515,40
STA – պրոֆեսորադասախոսական կազմի շարժունություն դասավանդման նպատակով	31 835	8 960
STT – պրոֆեսորադասախոսական կազմի շարժունություն վերապատրաստման նպատակով		22 875
OS – կազմակերպական աջակցություն	12 500	12 500
ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝	**80 855**	**75 850,40**

Իրականացրած շարժունության ծրագրեր

Ծրագրի շրջանակում իրականացվել է 25 ուսանողների, դասախոսական անձնակազմի և վարչական անձնակազմերի շարժունության ծրագիր:

ԲՈՒՀ	Երկիր	Քաղաք	ՈՒՇՈՒ	ԱՇԴ	ԱՇՎ	Ընդհանուր
Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան	Լեհաստան	Վարշավա	0	4	3	**7**
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան	Հայաստան	Երևան	1	1	0	**2**
			1	0	1	**2**
Ֆլումինենսեի դաշնային համալսարան	Բրազիլիա	Նիտեյրո	0	0	1	**1**
Սանտո Դոմինգոյի տեխնիկական ինստիտուտ	Դոմինիկյան Հանրապետություն	Սանտո Դոմինգո	0	0	2	**2**
Կովկաս համալսարան	Վրաստան	Թբիլիսի	1	0	1	**2**
Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան	Կոսովո	Ֆերիզա	2	0	3	**5**
Ազգային ավիացիոն համալսարան	Ուկրաինա	Կիև	1	0	0	**1**
Սումիի պետական համալսարան	Ուկրաինա	Սումի	0	0	1	**1**
Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարան	Ուկրաինա	Կիև	0	0	1	**1**
Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի	Ուկրաինա	Կիև	1	0	0	**1**

պոլիտեխնիկական ինստիտուտ»						
		Ընդհանուրը	**7**	**5**	**13**	**25**

Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանը ծրագրի շրջանակում 01.08.2022 – 31.07.2024թթ. ժամանակահատվածում հյուրընկալել է ընդհանուր առմամբ 18 մարդ՝ ուսանող, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամներ:

- **7 ուսանող.** 1 ուսանող ՃՇՀԱՀ-ից, 1 ուսանող _, 1 ուսանող Կովկասի համալսարանից, 2 ուսանող Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարանից, 1 ուսանող Ազգային ավիացիոն համալսարանից, 1 ուսանող Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի համալսարանից;
- 1 **դասախոս** ՃՇՀԱՀ-ից;
- **վարչական անձնակազմի 10 ներկայացուցիչ**. 1 մարդ Ֆլումինենսեի դաշնային համալսարանից, 1 մարդ Կովկաս համալսարանից, 1 մարդ՝ ___, 3 մարդ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարանից, 1 մարդ՝ Սումիի պետական համալսարանից, 2 մարդ Սանտո Դոմինգոյի տեխնոլոգիաների ինստիտուտից, 1 մարդ Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարան:

Վարշավային էկոլոգիայի և կառավարման համալսարանի ներկայացուցիչները դասախոսություններ են կարդացել գործընկեր-բուհերում՝ 1 մարդ ՃՇՀԱՀ-ում, 1 մարդ՝ Կովկաս համալսարանում, 1 մարդ՝ __, 1 մարդ՝ Ֆլումինենսեի դաշնային համալսարանում:

Վարշավային էկոլոգիայի և կառավարման համալսարանի վարչական կազմի 3 աշխատակից մասնակցեցին գործընկեր համալսարաններում կազմակերպված վերապատրաստմանը՝ 1-ը՝ Սանտո Դոմինգոյի տեխնոլոգիական ինստիտուտում, 1-ը՝ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարանում:

2023 թվականի մայիսի 29-ից հունիսի 2-ը, 2024 թ. հուլիսի 1-5-ը Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում անցկացվեց գործընկեր համալսարանների ներկայացուցիչների աշխատանքային շաբաթը, որի թեմաներն էին՝ սոցիալ-տնտեսական միջավայրում համագործակցության ձևավորում, միջազգային մարքեթինգի, կրթական համակարգեր Լեհաստանում և գործընկեր երկրներում, կրթության որակի ապահովում, միջազգային փոխանակումներ և տեղեկատվություն Էրազմուս+ ծրագրի վերաբերյալ, գործընկեր համալսարանների միջև կրթական և հետազոտական համագործակցության զարգացում, Էրազմուս+ ծրագրի շրջանակում հետագա համագործակցության խթանում, Լեհաստանի պատմության և մշակույթի ներկայացում, լեհերենի ուսուցում: Աշխատանքային շաբաթի ընթացքում գործընկեր համալսարանների ներկայացուցիչները կիսվել են իրենց լավագույն փորձով և քննարկել ծրագրերի իրականացման ժամանակ առաջացած խնդիրները:

Միջոցառումները նպաստեցին.

- Գործընկեր համալսարանների միջազգայնացման ռազմավարության մշակման և իրականացման համար,
- գործընկեր համալսարանների կառուցվածքի, կազմակերպական աշխատանքի և գործառույթների ներկայացմանը,
- կրթության որակի բարելավման մեխանիզմների և որակի ապահովման գործիքակազմի հետ կապված փորձի փոխանակմանը,

- կրթության որակի և ծառայությունների բարելավմանը,
- բուհերի միջև ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմերի միջազգային փոխանակման ընթացակարգերի և մեխանիզմների բարելավմանը,
- հետազոտական գործունեության շրջանակում համագործակցության ձևերի մշակմանը,
- Եվրոպական բարձրաույն կրթական միջավայրին ինտեգրմանը,
- սոցիալական, իրավական և բնապահպանական խոչընդոտների վերացման հետ կապված դրական փորձի փոխանակմանը,
- միջմշակութային հաղորդակցության ամրապնդմանը
- թիմային աշխատանքի և հմտությունների զարգացմանը:

II. ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

No	Մասնակցի անուն, ազգանուն	Գործունեության տեսակը	Մեկնարկը	Ավարտը	Տևողությունը (օր)	Ֆինանսավորումը (եվրո)	Ուղարկող համալսարանը	Ընդունող համալսարանը
1	Ելիզավետա Պրոցենկո	SMS	25.09.2023	24.02.2024	150	4 320	NAU (Ուկրաինա)	UEM (Լեհաստան)
2	Մարտա Օգոնովսկա	STT	09.02.2023	13.02.2023	5	2 760	UEM (Լեհաստան)	INTEC (Դոմինիկանա)
3	Բոգդան Գորչիկա	STT	15.05.2023	19.05.2023	5	1 535	UEM (Լեհաստան)	UASF (Կոսովո)
4	Յան Դիել-Միչալովսկի	STA	03.05.2023	07.05.2023	5	1 620	UEM (Լեհաստան)	NUACA (Հայաստան)
5	Պրիսցիլա Հոելց Պաչեկո	STT	29.05.2023	02.06.2023	5	2 480	UFF (Բրազիլիա)	UEM (Լեհաստան)
6	Ռոխ Ֆորովիչ	STA	22.05.2023	26.05.2023	5	1 620	UEM (Լեհաստան)	CU (Վրաստան)
7	Նատալյա Սոկոլովա	STT	12.06.2023	16.06.2023	5	1 535	UEM (Լեհաստան)	UASF (Կոսովո)
8		SMS	25.09.2023	24.02.2024	150	5 610		UEM (Լեհաստան)
9	Յանուշ Մարչվինսկի	STA	06.05.2024	10.05.2024	5	1 620	UEM (Լեհաստան)	
10	Կատարժինա Ադամիակ	STA	22.04.2024	26.04.2024	5	2 760	UEM (Լեհաստան)	UFF (Բրազիլիա)
11	Լանա Ակոպովի	SMS	25.09.2023	24.02.2024	150	4 360	CU (Վրաստան)	UEM (Լեհաստան)
12	Մերի Մարգարյան	SMS	26.02.2024	25.07.2024	150	4 360	NUACA (Հայաստան)	UEM (Լեհաստան)
13	Ցլկա Ջահա	SMS	22.02.2024	10.04.2024	49	3 020,40	UASF (Կոսովո)	UEM (Լեհաստան)
14	Կալտրինա Ուքսմաջլի	SMS	23.02.2024	22.07.2024	150	4 275	UASF (Կոսովո)	UEM (Լեհաստան)
15	Վիկտորիա Դեմիդիուկ	SMS	26.02.2024	25.07.2024	150	5 570	KPI (Ուկրաինա)	UEM (Լեհաստան)
16	Էլյանորա Մարգարյան	STA	08.04.2024	12.04.2024	5	1 340	NUACA (Հայաստան)	UEM (Լեհաստան)
17	Գուրանդա Գոգսաձե	STT	01.07.2024	05.07.2024	5	1 340	CU (Վրաստան)	UEM (Լեհաստան)

18		STT	01.07.2024	05.07.2024	5	1 340		UEM (Լեհաստան)
19	Ջեմաջլ Ուքսմաջլի	STT	01.07.2024	05.07.2024	5	1 255	UASF (Կոսովո)	UEM (Լեհաստան)
20	Շանի Աբբո	STT	01.07.2024	05.07.2024	5	2 480	INTEC (Դոմինիկանա)	UEM (Լեհաստան)
21	Քրիստալ Գեսպեդես	STT	01.07.2024	05.07.2024	5	2 480	INTEC (Դոմինիկանա)	UEM (Լեհաստան)
22	Արմեն Հիսա	STT	01.07.2024	05.07.2024	5	1 255	UASF (Կոսովո)	UEM (Լեհաստան)
23	Լավդիմ Բաջրամի	STT	01.07.2024	05.07.2024	5	1 255	UASF (Կոսովո)	UEM (Լեհաստան)
24	Յուլիա Գալչինսկա	STT	01.07.2024	07.07.2024	7	1 580	NULES (Ուկրաինա)	UEM (Լեհաստան)
25	Կրիստինա Շեչկովա	STT	01.07.2024	07.07.2024	7	1 580	SumDU (Ուկրաինա)	UEM (Լեհաստան)

SMS -	ուսանողների շարժունություն՝ ուսման նպատակով	NULES -	Ուկրաինայի բնապահպանության և բնական գիտությունների ազգային համալսարան, Ուկրաինա
STA -	անձնակազմի շարժունություն՝ դասավանդման նպատակով	KPI -	Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան «Իգոր Սիկորսկու անվան Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ», Ուկրաինա
STT -	անձնակազմի շարժունություն՝ վերապատրաստման նպատակով	UEM -	Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, Լեհաստան
NUACA-	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան		
UFF-	Ֆլումինենսեի դաշնային համալսարան (Բրազիլիա)	CU-	Կովկասի համալսարան (Վրաստան)
UASF-	Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան (Կոսովո)	SumDU -	Սումիի պետական համալսարան, Ուկրաինա
INTEC-	Սանտո Դոմինգոյի տեխնոլոգիական ինստիտուտ (Դոմինիկյան Հանրապետություն)	NAU-	Ազգային ավիացիոն համալսարան (Ուկրաինա)

1. Ուսանողների շարժունության իրականացում գործընկեր համալսարաններում՝ ուսումնառության նպատակով

ա. Անուն և ազգանուն՝ Ելիզավետա Պրոցենկո

բ. Ուղարկող համալսարան՝ Ազգային ավիացիոն համալսարան (Ուկրաինա)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 25.09.2023 – 24.02.2024

ե. Ֆինանսավորում՝ 4360 €

ա. Անուն և ազգանուն՝ Լանա Ակոպովի

բ. Ուղարկող համալսարան՝ Կովկաս համալսարան (Վրաստան)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 25.09.2023 – 24.02.2024

ե. Ֆինանսավորում՝ 4360 €

2023/2024 ուստարվա աշնանային կիսամյակում իրականացված Էրազմուս+ ծրագիրն լի էր անակնկալներով և հիշողություններով: Ինձ հնարավորություն ընձեռվեն սովորել Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում, որի համար շատ շնորհակալ եմ: Անձնակազմը, դասախոսները և շրջակա միջավայրը նպաստեցին հաճելի ուսումնական մթնոլորտի ձևավորմանը:

Լեհաստանում ինձ զգում էի ինչպես տանը: Ահա թե ինչու երկրների միջև իմ առաջին ընտրությունը՝ Լեհաստանն էր: Հնարավորություն ստացա ճանապարհորդել, տեսնել նոր քաղաքներ:

Ցանկանում եմ ընդգծել լեհ ժողովրդի հյուրընկալությունը: Ավելին, կցանկանայի նշել «Ընկերակցություն» ծրագիրը, որն օգնեց ինձ առօրյա հարցերում: Շնորհակալությունս եմ

հայտնում ծրագրի կազմակերպիչներին՝ Լեհաստան ժամանած աշխարհի տարբեր երկրների ուսանողների հետ բարի մթնոլորտում սովորելու համար:

ա. Անուն և ազգանուն՝ Մերի Մարգարյան

բ. Ուղարկող համալսարան՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան (Հայաստան)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 26.02.2024 – 25.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 4360 €

Էրազմուս շարժունության ծրագիրը Վարշավայում՝ կյանքիս վառ և հիշվող ժամանակահատվածն էր: Հանդիպեցի բարի և կենսախիդ մանդկանց: Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանի դասախոսները ուշադիր էին, ստեղծարար և շատ պրոֆեսիոնալ:

Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում ես հնարավորություն ստացա ծանոթանալու լեհական բարձրագույն կրթության լավագույն փորձին, տեսնել Վարշաված և ճանապարհորդել Եվրոպայով: Այս փոխանակման ծրագիրը օգնեց ինձ դառնալ ավելի անկախ, սովորեցրեց որոշումներ կայացնել, լինել պատասխանատու:

Էրազմուս փոխանակման ծրագրի շնորհիվ ձեռք բերված մասնագիտական հմտությունները, մեծապես կնպաստեն իմ հետագա կարիերային: Ես զարգացրել եմ իմ հաղորդակցման հմտությունները, խնդիրներն լուծելու կարողությունները ու ստեղծագործ ունակությունները: Շփումը տարբեր մարդկանց հետ զարգացրեց միջմշակութային և թիմային աշխատանքի ունակություններս: Բուհում տիրող ակադեմիական կարգապահությունը նպաստեց բոլորիս վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը:

Ես ապրում էի Wiśniowa հանրակացարանում, որտեղ շատ ջերմ ու հյուրընկալ մթնոլորտ էր: Երախտապարտ եմ իմ համալսարանին և տիկին Կարոլինա Ուրբան-Մրոզովսկային՝ ողջ ծրագրի ընթացքում ինձ օգնելու համար:

ա. Անուն և ազգանուն՝ Յլկա Ջահա

բ. Ուղարկող համալսարան՝ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան (Կոսովո)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 22.02.2024 – 10.04.2024

ե. Ֆինանսավորում՝ 3 020,40 €

ա. Անուն և ազգանուն՝ Կալտրինա Ուքսմաջլի

բ. Ուղարկող համալսարան՝ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան (Կոսովո)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 23.02.2024 – 22.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 4 275 €

23.02.2024-22.07.2024 ընկած ժամանակահատվածում սովորել եմ Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում: Կարող եմ փաստել, որ Էրազմուս+ այս ծրագիրը շատ լավ կազմակերպված էր: Ծրագրի մասնակիցները, շրջակա միջավայրը, ստացված փորձը, ուսումնառության նոր միջավայրը՝ շատ դրական ազդեցություն թողեցին: Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի Էրազմուս ծրագրի գրասենյակի աշխատակիցները մեծ աջակցություն էին ցուցաբերում բոլորին ամբողջ ուսումնառության ընթացքում: Որպես կանոն, փոխանակման ծրագրի մասնակից ուսանողները շատ հարցեր են ունենում ծրագրի կազմակերպիչներին:

Շատ գոհ եմ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի կրթության որակից և մակարդակից: Ուսանողների համար կազմակերպվել են բազմաթիվ խմբային աշխատանքներ, շնորհանդեսներ, պրակտիկաներ:

Շարժունության ծրագրի ընթացքում հնարավորություն ունեցա ծանոթանալու Լեհաստանի պատմությանը, ավանդույթներին, խոհանոցին, հանդիպել նոր մարդկանց տարբեր երկրներից: Այս փորձը ապացուցում է, որ Էրազմուս+ ծրագիրը շատ մեծ դեր և կարևորություն ունի ուսանողության համար:

Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում գործում են բազմաթիվ գիտական խմբեր, ակումբներ, ինչը ուսանողներին հնարավորություն է տալիս լիարժեք անցկացնել իրենց ազատ ժամանակը: Կցանկանայի նորից վերադառնալ այնտեղ: Ընդհանուր առմամբ, ես կարծում եմ, որ Լեհաստանը հիանալի երկիր է, անվտանգ և շատ հյուրընկալ օտարերկրացիների համար:

ա. Անուն և ազգանուն՝ Վիկտորիա Դեմիդիուկ

բ. Ուղարկող համալսարան՝ Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարան՝ «Իգոր Սիկորսկու Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ»

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 26.02.2024 – 25.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 5 570 €

Ես՝ Վիկտորիա Դեմիդիուկն եմ Ուկրաինայից, սովորում եմ «Կառավարում և լոգիստիկա» կրթական ծրագրով Ուկրաինայի ազգային տեխնիկական համալսարանում՝ «Իգոր Սիկորսկու Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ»: Շատ էի ցանկանում մասնակցել Էրազմուս+ ծրագրին, որը թույլ տվեց ինձ ընդլայնել իմ կրթական հնարավորությունները և ձեռք բերել միջազգային փորձ:

Պատիվ ունեցա սովորելու Լեհաստանի Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում: Բուհում կիրառվում են դասավանդման նոր մեթոդներ՝ համատեղելով տեսական աշխատանքները գործնական խմբային աշխատանքների հետ: Այս մոտեցումը

խթանեց ուսանողների միջև համագործակցությունը և մշակութային երկխոսությունը: Դրական փորձառություններից մեկն էր՝ մեր խմբային աշխատանքը, որի ընթացքում կիսվեցինք մեր գաղափարներով և նոր տեղեկատվություն ստացանք:

Լեհաստանի Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում տիրում էր շատ հյուրընկալ մթնոլորտ, իսկ Էրազմուս+ գրասենյակի աշխատակիցները մշտապես աջակցում էին սովորող ուսանողներին ինտեգրվել նոր միջավայրում:

Վարշավան ինքնին հնարավորություն է տալիս վարել աշխույժ ապրելակերպ՝ ուսումնասիրել նոր վայրեր, շփվել նոր մարդկանց հետ, համտեսել տեղական խոհանոցը:

Ընդհանուր առմամբ, Էրազմուս+ շարժունության ծրագիրն անգնահատելի է՝ անձնական և մասնագիտական առաջընթացի տեսնակյունից: Իմ խորհուրդն է ապագա ուսանողներին՝ օգտվել յուրաքանչյուր հնարավորությունից, լինել պարկեշտ և առավելագույնս օգտագործել ծրագրի ընթացքում ձեռք բերված հարուստ փորձը, ինչն անկասկած, երկարատև ազդեցություն կթողնի մասնագիտական գործունեության վրա:

2. Գործընկեր համալսարաններում ուսանողների համար դիդակտիկ պարապմունքներ անցկացնելու նպատակով ակադեմիական անձնակազմի շարժունություն

ա. Անուն և ազգանուն՝ Յան Դիել-Միխայլովսկի

բ. Ուղարկող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

գ. Ընդունող համալսարան՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

դ. Շարժունության տևողությունը՝ 03.05.2023 – 07.05.2023

ե. Ֆինանսավորում՝ 1 620 €

ա. Անուն և ազգանուն՝ Ռոխ Ֆորովիչ

բ. Ուղարկող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

գ. Ընդունող համալսարան՝ Կովկաս համալսարան

դ. Շարժունության տևողությունը՝ 22.05.2023 – 26.05.2023

ե. Ֆինանսավորում՝ 1 620 €

Էրազմուս+ ծրագրի շրջանակում ուղևորությունը Վրաստան՝ շատ դրական փորձ էր ինձ համար: Բացի այդ, սա հնարավորություն էր ընդլայնել մասնագիտական շփումները, ներկայացնել ձեռք բերված փորձն ու գիտելիքները գործընկեր բուհում: Բացի այդ, կարևորում եմ մասնագիտական շփումների ընդլայնումը (Աշխատակազմի շաբաթ), փորձի փոխանակումը:

Թբիլիսին՝ եզակի է իր յուրահատուկ ճարտարապետական յուրահատկությունների շնորհիվ, որը ես ցանկանում էի այցելել: Շատ տպավորիչ են Fuksas Studio-ի հետմոդեռնիստական շենքերը, որոնք տարբերվում են քաղաքի պատմական կառուցներից:

Շարժունության ընթացքում ներկայացվեցին Unreal Engine 5-ի և VR տեխնոլոգիայի վրա հիմնված ծրագրերը, որոնք հնարավորություն են ընձեռում նորարական տեխնոլոգիաների կիրառմամբ ստանալ ինտերիերի վիզուալիզացիան: Այս նոր մեթոդի կիրառումը թույլ է տալիս ստանալ տարածքի ավելի ամբողջական պատկերը, ինչն էապես տարբերվում է նախկինում կիրառվող վիզուալիզացիայի մեթոդներից: Ձեռք բերված արդյունքն իրական ժամանակում հնարավորություն է տալիս ազատ տեղաշարժել առարկաները տարածության ներսում (տարածական սիմուլյացիաներ): Այս տեխնիկական լուծումը ներկայացրել են Վրաստանի Կովկաս համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի ուսանողները:

Ավելին, այցիս ընթացքում մասնակցեցի Անձնակազմի միջազգային շաբաթվա միջոցառումներին, որի ընդհանուր թեման էր՝ միջազգային կրթական մոդելները և դրանց տարբերությունները:

ա. Անուն և ազգանուն՝ Կատարժինա Ադամիակ

բ. Ուղարկող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

գ. Ընդունող համալսարան՝ Ֆլումինենսեի դաշնային համալսարան (Բրազիլիա)

դ. Շարժունության տևողությունը՝ 22.04.2024 - 26.04.2024

ե. Ֆինանսավորում՝ 2 760 €

ա. Անուն և ազգանուն՝ Էլյանորա Մարգարյան

բ. Ուղարկող համալսարան՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 08.04.2024 – 12.04.2024

ե. Ֆինանսավորում՝ 1 340€

Պատիվ եմ ունեցել մասնակցելու Լեհաստանի Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանում Էրազմուս+ շարժունության ծրագրին: Առաջին իսկ օրվանից ես զգացի այն ջերմ և հյուրընկալ մթնոլորտը, որը ստեղծվել էր Էրազմուս+ ծրագրի համակարգող Կարոլինա Ուրբան-Մրոզովսկայայի և համալսարանի անձնակազմի կողմից: Ծրագրի ընթացքում դասախոսություններ կարդացի Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի 2-րդ կուրսի ուսանողների համար՝ «Դիզայնի մտածողության և կոնցեպտուալացման գործընթացը վեբ դիզայնում» թեմայով: Ուսանողներն ակտիվ մասնակցում էին դասախոսություններին, քննարկում անհատական նախագծերը, փոխանակվում գաղափարներով և դիզայներական ծրագրերով: Դասախոսության ժամանակ ներկայացրեցի նոր դիզայներական մոտեցումներն ու սկզբունքները, կիրառումը վեբ դիզայնում՝ շեշտը դնելով հայեցակարգային խնդիրների լուծման վրա: Տեսական մասից հետո, ուսանողները կատարեցին ինքնուրույն աշխատանք՝ ստեղծելով տրված թեմաներով կայքի գլխավոր էջեր, այնուհետև քննարկմանը ներկայացրեցին իրենց աշխատանքները: Շատ հաճելի էր ուսանողների անկեղծ գնահատականը և այն ոգեշնչեց իրենց: Ավելին, խորապես տպավորվեցի ուսանողների աշխատանքների բացառիկ որակով և ուսման բարձր մակարդակով:

Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան կատարած այցի ժամանակ շատ տպավորվեցի համալսարանական շենքերի և ընդհանուր ինտերիերի ձևավորմամբ, որը մոտիվացնում և ոգեշնչում է ոչ միայն ուսանողներին, այլև դասախոսներին:

Ընդհանուր առմամբ, Էրազմուս+ ծրագրի շրջանակում ձեռք բերված փորձառությունը շատ օգտակար էր:

Եզակի հնարավորություն ունեցա այցելելու Վարշավա, և շատ տպավորված եմ այս քաղաքից: Շրջայցի շամանակ նկատեցի, թե որքան տարբեր են հին շենքերը՝ համեմատած նորերի հետ: Հատկապես աչքի էր ընկնում քաղաքի հին հատվածը, որը կոչվում էր Հին քաղաք: Բոլոր շենքերը շատ լավ վերանորոգված էին:

Փողոցները սալաքապատված են, իսկ շենքերը՝ ներկված: Ամենուրեք գործում են փոքր շուկաներ, որտեղ տիրում է աշխուժություն: Դա ինձ ստիպեց մտածել, թե որքան ուժեղ և վճռական է լեհ ժողովուրդը, ով վերակառուցել և պահպանում է իր քաղաքը: Վարշավան հակասությունների քաղաք է, որտեղ հանդիպում են անցյալն ու ներկան՝ ստեղծելով անկրկնելի միջավայր:

3. Աշխատակազմի ներկայացուցիչների վերապատրաստում

ա. Անուն և ազգանուն՝ **Մարտա Օգոնովսկա**

բ. Ուղարկող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

գ. Ընդունող համալսարան՝ Սանտո Դոմինգոյի տեխնոլոգիական ինստիտուտ (Դոմինիկյան Հանրապետություն)

դ. Շարժունության տևողությունը՝ 09.02.2023 – 13.02.2023

ե. Ֆինանսավորում՝ 2 760 €

ա. Անուն և ազգանուն՝ **Բոգդան Գորչիցա**

բ. Ուղարկող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

գ. Ընդունող համալսարան՝ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան (Կոսովո)

դ. Շարժունության տևողությունը՝ 15.05.2023 – 19.05.2023

ե. Ֆինանսավորում՝ 1 535 €

2023 թվականի մայիսի 15-19-ը այցելեցի Կոսովոյի Ֆերիզայ Կիրառական գիտությունների համալսարան: Այն պետական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն առաջարկում է բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրեր: Բուհում շեշտը դրվում է արտաքին կապերի և համագործակցության խորացման, միջազգային հարաբերությունների ընդլայնման վրա: Համալսարանն ունի կահավորված նոր շենք՝ արհեստանոցներով և գործնական լաբորատորիաներով:

Արտաքին կապերի գծով պրոռեկտորի հետ հանդիպումների ընթացքում մանրամասն քննարկվել են համագործակցության խնդիրները: Քննարկվել են ոչ միայն ուսումնական ծրագրերի ներդրման և իրականացման հետ կապված խնդրները, այլ նաև համալսարանի որոշ ձեռքբերումների առևտրայնացման հարցերը: Համալսարանի ռեկտորի, պրոռեկտորների, Ճարտարապետության, դիզայնի, պայտի մշակման տեխնոլոգիայի ֆակուլտետների դեկանների հետ կայացած մի շարք հանդիպումների ընթացքում քննարկեցինք Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարանի և Վարշավայի կիրառական գիտությունների համալսարանի կողմից առաջարկվող ծրագրերը և կիրառվող դասավանդման մեթոդները: Ուսանողների հետ կայացած հանդիպումների ընթացքում կարևորվեց թիմային աշխատանքը:

Շատ տպավորվեցի Պրիշտինայի նորաբաց առևտրի կենտրոնով, Ճարտարապետական հետաքրքիր լուծումով, փայտե տանիքով կառույց էր:

ա. Անուն և ազգանուն՝ Պրիսցիլա Հոելց Պաչեկո

բ. Ուղարկող համալսարան՝ Ֆլումինենսեի դաշնային համալսարան (Բրազիլիա)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 29.05.2023 – 02.06.2023

ե. Ֆինանսավորում՝ 2 480 €

Վարշավայում համալսարանում իրականացված շարժունության ծրագիրը՝ եզակի փորձ էր ինձ համար՝ որպես բրազիլական բարձրագույն ուսումնական հաստատությունում միջազգային հարցերով խորհրդատուի: Շատ կարևորում եմ տարբեր բուհերի ներկայացուցիչների միջև փորձի փոխանակումը: Բացի այդ, հետաքրքիր էր լսել գործընկերներիս կարծիքներն ու մոտեցումները, քանի որ յուրաքանչյուրն բուհ ունի իր առանձնահատկությունները: Կազմավորվել էր շատ լավ աշխատանքային խումբ:

Համալսարանների աշխատակազմերի միջազգային շաբաթվա ընթացքում գործնական կապեր հաստատեցի ոչ միայն ընդունող համալսարանի ներկայացուցիչների, այլ նաև այն երկրների գործընկերների հետ: Բոլորի հետ համատեղ ուժերով հնարավոր է իրականացնել շատ հետաքրքիր նախագծեր:

Այցիս ընթացքում կարևոր էր նաև ներկայացնել իմ համալսարանը, Բրազիլիայի կրթական համակարգը, համալսարանի միջազգային համագործակցության քաղաքականությունն ու ռազմավարությունը

Վերադարնալուն պես իմ համալսարանում ներկայացրեցի լեհական բարձրագույն ուսումնական համակարգը, մասնակից գործընկեր համալսարանների փորձը, կրթական գործընթացի կազմակերպման և կառավարման մանրամասները, ներդրված կրթական ծրագրերը: Անշուշտ, ներկայացված տեղեկատվությունը շատ հետաքրքրեց գործընկերներիս:

Ավելին, ստեղծված ցանցային կապը բուհերի միջև օգտակար է ապագա կրթական և հետազոտական համագործակցության համար:

Շատ տպավորված եմ լեհական մշակույթով, և այն ուշադրությամբ, որին արժանացա Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում: Իմ հիշողության մեջ հավերժ կմնան այցիս ընթացքում ստացված դրական տպավորությունները: Ծանոթացանք լեհերենին, Վարշավայի պատմությանը, սովորույթներին: Ես մեծ սիրով կներկայացնեմ իմ համալսարանում գործուղմանս արդյունքները, Լեհաստանի դրական փորձը, որի ուսումնասիրումը կնպաստի միջազգային համագործակցության զարգացմանը:

ա. Անուն և ազգանուն՝ **Նատալյա Սոկոլովա**

բ. Ուղարկող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

գ. Ընդունող համալսարան՝ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան (Կոսովո)

դ. Շարժունության տևողությունը՝ 12.06.2023 – 16.06.2023

ե. Ֆինանսավորում՝ 1 535 €

ա. Անուն և ազգանուն՝ **Գուրանդա Գոգսաձե**

բ. Ուղարկող համալսարան՝ Կովկաս համալսարան (Վրաստան)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 01.07.2024 – 05.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 1 340 €

ա. Անուն և ազգանուն՝ **Ջեմաջլ Ուքսմաջլի**

բ. Ուղարկող համալսարան՝ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան (Կոսովո)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 01.07.2024 – 05.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 1 255 €

ա. Անուն, ազգանուն՝ **Շանի Աբբո**

բ. Ուղարկող համալսարան՝ Սանտո Դոմինգոյի տեխնոլոգիական ինստիտուտ (Դոմինիկյան Հանրապետություն)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 01.07.2024 – 05.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 2 480 €

Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանում հաջողությամբ իրականացրեցի շարժունության ծրագրով նախատեսվածը: Մասնավորապես, Էրազմուս+ ծրագրով անձնակազմի միջազգային շաբաթվա ընթացքում գործնական կապեր հաստատեցի ընդունող համալսարանի, մասնակից գործընկեր այլ հաստատությունների ներկայացուցիչների հետ: Բոլոր միջոցառումները անցան շատ ջերմ մթնոլորտում և արդյունավետ էին՝ համագործակցության ընդլայնման, փորձի փոխանակման տեսանկյունից: Զգալիորեն ընդլայնեցի իմ մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը, ծանոթացա Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի կառուցվածքին, ուսումնական գործընթացի կազմակերպման նրբություններին: Պետք է նշեմ, որ այցիս ընթացքում փորձ ձեռք բերեցի այլազգի ներկայացուցիչների հետ աշխատելու ուղղությամբ: Բացի այդ, զգալիորեն բարելավեցի լեհերենի իմացությունս, ծանոթացա Լեհաստանի պատմությանն ու մշակույթին:

ա. Անուն, ազգանուն՝ Քրիստալ Գեսպեդես

բ. Ուղարկող համալսարան՝ Սանտո Դոմինգոյի տեխնոլոգիական ինստիտուտ (Դոմինիկյան Հանրապետություն)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 01.07.2024 – 05.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 2 480 €

Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի և Սանտո Դոմինգոյի տեխնոլոգիական ինստիտուտի (Դոմինիկյան Հանրապետություն) միջև Էրազմուս+ միջազգային շարժունության համաձայնագրի շրջանակում բացառիկ հնարավորություն ստացա մասնակցելու 2024 թվականի հուլիսի 1-5-ը Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի կողմից կազմակերպված Erasmus+ բուհերի անձնակազմերի միջազգային շաբաթվա ծրագրին:

Ծրագրի ողջ ընթացքում աշխատեցինք հագեցած օրակարգով, որը ներառում էր ճամբարային շրջագայություն, սեմինարներ, մշակութային միջոցառումներ, թիմային աշխատանք և այլն: Ինձ հատկապես հետաքրքրեց տեղեկատվությունը Էրազմուս+ շրջանակում նախատեսվող նախագծերի և ծրագրերի մասին, որտեղ մանրամասն ներկայացվեցին ծրագրերի հիմնական նպատակները: Անդրադարձ կատարվեց նաև հետազոտական ոլորտին, Էրազմուս ծրագրի միջոցով իրականացված թվայնացման գործընթացներին, շրջայց կատարեցինք հաշմանդամություն ունեցող անձանց համար սիմուլյացիայի լաբորատորիա: Ներկայացվեցին նաև Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի կողմից կազմակերպված շարժունության ծրագրերը: Ստացված լավագույն փորձը պատրաստ եմ կիրառել իմ բուհում:

Պետք է նշեմ, որ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարանի կողմից տրամադրվեցին գրագետ կազմված օրակարգը, միջոցառումների մասին տեղեկատվությունը:

ա. Անուն, ազգանուն՝ **Արմեն Հիսա**

բ. Ուղարկող համալսարան՝ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան (Կոսովո)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 01.07.2024 – 05.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 1 255 €

ա. Անուն, ազգանուն՝ **Լավդիմ Բաջրամի**

բ. Ուղարկող համալսարան՝ Ֆերիզայի կիրառական գիտությունների համալսարան (Կոսովո)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 01.07.2024 – 05.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 1 255 €

ա. Անուն, ազգանուն՝ **Յուլիա Գալչինսկա**

բ. Ուղարկող համալսարան՝ Ուկրաինայի բնապահպանության և կենսաբանական գիտությունների ազգային համալսարան

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 01.07.2024 – 07.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 1 580 €

ա. Անուն, ազգանուն՝ Կրիստինա Շեչկովա

բ. Ուղարկող համալսարան՝ Սումիի պետական համալսարան (Ուկրաինա)

գ. Ընդունող համալսարան՝ Վարշավայի էկոլոգիայի և կառավարման համալսարան, (Լեհաստան)

դ. Շարժունության տևողությունը՝ 01.07.2024 – 07.07.2024

ե. Ֆինանսավորում՝ 1 580 €

Ուրախ էի մասնակցել Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանում անցկացված բուհերի անձնակազմերի ներկայացուցիչների միջազգային շաբաթին: Միջոցառման ծրագրով նախատեսված էին մասնագիտական կարողությունների զարգացմանը նվիրված միջոռացումներ, այլ մշակույթների մասին տեղեկատվության ներկայացում, խմբային աշխատանք: Ծրագրին մասնակցեցին Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի, Կոսովոյի, Բրազիլիայի, Դոմինիկյան Հանրապետության բուհերի ներկայացուցիչներ, որոնք ներկայացրեցին իրենց փորձը Էրազմուս+ ծրագրի իրականացման, միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ:

Գործուղմանս ընթացքում հնարավորություն ունեցա այցելել Հին քաղաքը, համտեսել տարբեր երկրների կերակուրներ:

Շատ երախտապարտ եմ Էրազմուս+ ծրագրին և Վարշավայի Էկոլոգիայի և կառավարման համալսարանի անձնակազմին՝ ընձեռված հնարավորության, ջերմ ընդունելության և ընկերական մթնոլորտի համար: